




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերեւագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported CC BY NC SA License.

Դու կարող ես.

ստեղծել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կայքով  
մեղմելով կամ ոչնչացնելով առկա նյութը առանց ու իրենք ներք

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format  
Adapt – remix, transform, and build upon the material





ԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԿՈՒԲԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

087.1:59

# ՄՎԿԻԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԸ

(ԿԵՏԻ ՄԱՍԻՆ)

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ



ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Դրանկայ. 688 (բ). Պետհր. 378. Տիրաժ 5000. Պատկեր № 1833

---

Պետհրատի IV սպարանգ լեհիմականում

## ՈՎԿԻԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԸ

(Կեսի մասին)

Լսել եք կետի մասին, այո, այն կետի, վորին մենք բոլորս, յերբ դեռ փոքր եյինք, ձկան տեղ եյինք ընդունում:

Ի հարկե շատ շատերդ դեպից-դենից լսած տեղեկություններ ունեյիք, բայց այն, ինչ վոր ինձ մի նորվեգացի նավաստի պատմեց, յես բավականին հետաքրքրական գտա. թվում ե ինձ, վոր յեթե յես իմ լսածը պատմեմ սիրելի ընթերցողներիս, նրանք ինձանից դոհ կըմնան:

Ինչո՞ւ մենակ յես իմանամ նավաստու պատմածը: Յես նրան ել ասացի, վոր միևնույն ե, ինչ վոր նա ինձ պատմի, յես ել ուրիշին եմ պատմելու:

Այդ խոսքերիս վրա նավաստին ծիծաղեց ու ասաց.

— Ուզում ես հազար մարդու ել պատմի, ինչ ե վոր...

Նավաստի Խրիստիանի (այդպես եր նրա անունը) հետ յես ծանոթացա շոգենավում, բոլորովին հեռու իր հայրենիքից:

Իրար ծխախոտ առաջարկելով մենք շուտով ծանոթացանք: Նա հասակավոր մարդ եր: Գերմանական չիբուխը նրա անբաժան ընկերակիցն եր: Այդ չիբուխից նա յերբեք չեր բաժանվում:

Յերբ ես նրան գլանակ առաջարկեցի, նա պատուեց բարակ թուղթը, ծխախոտն ածեց չիբուխի մեջ, վառած լուցկին մոտեցրեց ծխախոտին ու մեծ ախորժակով սկսեց ներս քաշել «աղնիկ» (ինչպես նա եր ասում) ծխախոտի ամբողջ հյութը:

Ձգիտեմ՝ ինչպես յեղով, խոսք բացվեց կետի մասին, կարծեմ այսպես եր. յես նրա դեմքին՝ ճակատին, ձախ աչքի տակին, ինչ վոր մանր վերքերի սպիներ նկատեցի. հարցրի պատճառը: Նա հանկարծ գլուխը շարժեց, ձեռքը բարձրացրեց բացականչելով.

— Ո՛ր... անցած պատմություն ե...

Բայց յես շատ հետաքրքրվեցի, թե ի՞նչ պատմություն ե:

Բանից դուրս յեկավ, վոր Խրիստիանը մի ժամանակ կետորսությամբ եր պարապել:

Խնդրեցի նրան՝ կետորսության միջանի դեպքեր պատմել: Նա առանց սպասելու, վոր խնդիրս յերկրորդ անգամ կրկնեմ, իսկույն դիմեց իր անցյալի հիշողություններին:

Կետորսության հետ մեծ կապ ունեյին նրա դեմքի վերքերը:

Այսպես սկսեց իր պատմությունը նավաստի Խրիստիանը.

«Նորվեգիան ե հայրենիքս: Սկանդինավյան թերակղզու հյուսիսային Համերֆեստ քաղաքումն եյի ապրում: Ձկնորսությամբ եյի պարապում: Խոշոր ձկներ վորսալ հաճախ եր պատահում և ամեն անգամ ել վորսս անսլակաս եր:

Կյանքս խաղաղ, հանգիստ առաջ եր գնում: Վորքան հարկավոր եր՝ աշխատում եյի, աշխատածս ընտանիքիս հետ ուտում, գոհ եյի ունեցածովս:

Բայց մի օր (գրողը տանի այդ օրը), յերբ մեր քաղաքում լուր տարածվեց, թե ովկիանի հյուսիսային մասերում մեծ թվով կետ եր հայտնվել, իմ մեջ մի համարձակ միտք, ցանկություն ծագեց. կարծես այդ օրը զգացի, թե ունեցածս քիչ ե. բայց այդ մասին հետո:

Գիտեմ՝ կետ ի՞նչ ասել ե: Տեսե՛լ ես այդ մեծ, զամանալի կենդանուն: Չուկ ասես՝ ձուկ չի, և ծովն ե վկա, ինքս ել չգիտեմ՝ ի՞նչ ե. բայց վոր ձուկ ել չի, թեև նրա նման ե—դրան յես հավատացած եմ:

Հա, են եյի ասում, վոր մեր քաղաքում հենց վոր լուրեր տարածվեցին կետերի մասին, միքանի որից հետո ել իմացանք, վոր յերկու թե յերեք ձկնորսական նավեր խորտակվել են. հինգ մարդ եր ջրի տակ գնացել:

Այդ լուրը բավական եր, վոր քաղաքը վտաքի կանգներ: Մեր քաղաքը, պետք ե ասեմ, հենց ովկիանի քթին եր. այդ ե պատճառը, վոր լուրերը մեզ շուտ եյին հասնում: Հետո մի բան ել պիտի ասեմ, վոր մեր կողմերում շատ մարդիկ կային, վոր կետ վորսալով եյին ապրում և հարստանում եյին:

Յերբ նավերի խորտակման լուրերը հասան, մի մարդ չկար, վոր կետի մասին չխոսեր: Խեղճ գոհերի պատճառը կետն եր:

Նավաստիները, ձկնորսներն սկսեցին փոքր ինչ վախենալ, ել շուտ-շուտ ովկիան չեյին դուրս գալիս. սակայն ձկնորսների համար կատարյալ տոն եր. նրանց ուրախությանը չափ չկար. փույթ չե, վոր նավեր են խորտակվում, մարդիկ են գոհվում... բախտի բան ե. փորձանքների ել սովոր եյին բոլորը:

Նրանք լավ գիտեյին, վոր յերկար չի քաշի ու կետերը կըցրվեն: Լավ ժամանակ եր մեծ թվով կետ վորսալու:

Որ չեր անցնում, վոր այս կամ այն կետորսը նավ նստելով ովկիանի խորքերը չանցներ:

Յեվ ինչ: Գրպանները ուռած եյին վերադառնում: Ձեր փողով հաշված, միքանի հազար ուլրի եյին վաստակում:

Յես ել լավ գիտեյի, վոր կետից շատ ու շատ մեծ ոգուտներ կարելի յե տեսնել:

Ի՞նչ ես կարծում... Վճռեցի՝ ձկնորսությունը թողնեմ և կետի յետևից ընկնեմ:

Մեկ կետորսի հետ միացա: Թեև այդ գործից բան չեյի հասկանում, բայց պիտի ասեմ, մի կլորիկ գումար

ունեյի. այդ գումարովս միացա կետորսի հետ և մեծ հույս ունեյի, վոր բավականին կըշահվեմ:

Գործերս լավ եյին գնում: Միքանի տարի աշխատեցինք: Մի որ ել զգացի, վոր գրպանս փոքր ինչ ուռել ե. հա, այժմ կլորիկ գումարիս վրա մի կլորիկ գումար ել ե ավելացել:

Մի որ ինքս ինձ մտածեցի.

— Այ Խրիստիան, լավ լսիր, դու ինչո՞վ ես պակաս մյուսներից: Ձեռքեր չունե՞ս, վոտքեր չունե՞ս, խելք և հասկացողություն չունե՞ս: Մի գուցե վախկոտի մեկն ես. և վերջապես փողդ ե պակաս: Վոչ ես, վոչ են և վոչ են մեկը: Բոլորից ել, փառք մեր տոհմին, գուրկ չեյի: Ուրեմն ինչո՞ւ մենակ գործի դուրս չգամ:

Ինչ մեղքս թաքցնեմ. մի տեսակ փողին կալել եյի. շատ սիրեցի. ասենք մեր աշխարհում կա՞ մեկը, վոր փող չսիրի... Ի հարկե վոչ. այնպես չե՞. այնպես ե: Մտածելն ու կատարելը մեկ յեղավ:

Մի նավ վարձեցի: Նավաստիներ և ոգնականներ ել վարձեցի: Հարկավոր գործիքներ ձեռք բերի՝ հատուկ թնդանոթ, հարպուն և միքանի այլ գործիքներ: Ամեն ինչ պատրաստեցի, միքանի որվա պաշար վերցրի. խմիչք ել—ինչո՞ւ ծածկեմ, դեպի կենդանարար հեղուկը փոքրիկ ձկնոտ մունեյի, բայց հավատացնում եմ քեզ, հարբող չեմ. հենց այնպես, մեկ-մեկ հարկավոր ե, մի փոքրիկ բաժակ... տաքանալու... ույժ ստանալու համար:

Հա, պաշարեղեն, խմիչք, մի խոսքով՝ ինչ վոր հարկավոր եր՝ թե ինձ համար և թե վորսի համար. բոլորը վերցրի, նստեցինք նավս և ճանապարհ ընկանք:

Ուղևորվեցինք դեպի օվկիանի հյուսիս-արևմտյան կողմերը: Յես արդեն հմուտ եյի, լավ գիտեյի, թե վոր կողմերում ավելի հաճախ կետի կարելի չե հանդիպել:

Մեր բաղդից քամին հակառակ չեր, փչում եր հենց մեր ընտրած ճանապարհի ուղղությամբ: Առագաստներն արձակեցինք. նավս ավելի արագ սկսեց վազել:

Մի որ անցավ: Հետեյալ որը յես հույս ունեյի վորսիս հանդիպելու: Անհամբերությունից հանգիստ չունեյի: Մեծ-մեծ ծրագրներ եյին անցնում մտքովս: Մտածում եյիք յեթե այսքան կամ այնքան կետ վորսամ, այս կառնեմ, այն կառնեմ: Անպատճառ մտածում եյի ծովափնյա գյուղերից մեկում մի լավ հող գնել, տնակ շինել... Ամենից լավն ե՛ պատմեմ, թե ինչպես հանդիպեալի առաջին կետին:

Յերկրորդ որն եր. կապիտանի տնակից հեռադիտակով հեռվում, ջրի յերեսին մի սև յերկար գիծ նշմարեցի:



ԿԵՏ ՁՈՒԿԸ

Այդ գիծը անշարժ չեր. ապա մի փոքր հետո ուրիշն ել յերևաց. առաջինը անհայտացավ: Ոգնականներս ել վաղուց նկատել եյին սև գծներ. բոլորս լավ գիտեյինք, թե այդ ինչ գծեր եյին: Կասկած չկար, վոր կետին եյինք մոտենում:

Շուտով, յերբ նավը ավելի ևս մոտեցավ, յերկուսի փոխարեն չորսը յերևաց:

— Խրիստիան, — ասաց ինձ գլխավոր ոգնականս, — մի քանի հատ են: Յեթե յերկուսին ել բռնենք, մեծ հարստության տեր կըդառնանք: Սպասեք մի փոքր ել, թող քիչ իրարից հեռանան:

Ավելի ևս մոտեցանք: Ուշադրությամբ դիտում եյի ովկիանի արքաներին: Շարունակ ծովի յերեսին չեյին մնում: Պոչի յերկճյուղանի լողաթաթը շարունակ գործում

եր ճիշտ այնպես, ինչպես շոգենավի պտուտակը... Տեսնում ես — այդ լողաթափը հորիզոնական դրությամբ փրկվեց ջրի յերեսին. մեկ ել լավեց փրփուալ, լողաթափը պտուտակի պես աջ ու ձախ սկսեց գործել, ապա կետը արագությամբ լողաց առաջ ու մեղնից հեռացավ: Այդ մեզ ամենամոտ կետն էր: Մենք հետևեցինք նրան, Հանդարտ լողում եր կետը, մեկ ել տեսար պոչի լողաթափը սկսեց արագությամբ գործել, կետը ելի առաջ վազեց, ապա սկսեց ջրի տակ անցնել և վերջապես անհայտացավ: Բայց յես լավ գիտեյի, վոր կետը յերկար չի մնում ջրի տակ. 15 րոպեյից հետո կետը նորից դուրս ե գալիս: Դեռ այն ժամանակ, յերբ յես ուրիշի մոտ եյի ծառայում, ինձ համար անհասկանալի եյին կետի միջանի հատկությունները: Պիտի խոստովանեմ, վոր առաջներում յես ել կետին ձկան տեղ եյի ընդունում: Յեվ ճիշտ վոր՝ կատարյալ մեծ ձուկ լինի կարծես: Բայց դու մի ասիլ, անպիտանը իսկական կաթնասունն է: Յես իմ աչքովս տեսա նրա ծծերն ու թոքերը: Դրսի ողով ե շնչում. հենց դրա համար 10—15 րոպեն մի անգամ ջրի յերեսն ե դուրս գալիս նոր ող ներշնչելու:

Ինձ մի բան ե դարմացնում. այդ ինչպես յեղավ, վոր կաթնասունների մեծ մասը չորքոտանի յե և ցամաքի վրա յե ապրում, իսկ այս ափդահա կաթնասունը ջրի մեջ ե ապրում և ինչպես ե կարողանում իր այնքան մեծ մարմինը ջրի մեջ պահել. այդ բավական չե, դեռ այնպես ե վազում ջրի մեջ, վոր յետևից չես հասնի:

Խրիստիանը լռեց: Նա բացատրության եր սպասում: Յես ասացի.

— Դու ինքդ ել լավ գիտես, Խրիստիան, վոր ջրի մեջ լողալու համար անհրաժեշտ ե այնպիսի ձև ունենալ, վոր հեշտ լինի ջուրը ճղել: Վո՞րն ե հեշտ. ծովի վրա յենք՝ յերկու գերան պիտի քաշենք, մեկի յերկու ծայրից թուկ ենք կապում և թուկերը միացնելով քաշում, իսկ մյուս

գերանի մեկ ծայրից ենք թուր կապում և քաշում...  
 Խրիստիանը իսկույն ասաց.

— Շատ պարզ է, վոր գերանը յերկարությամբ պիտի քաշել, մեծ ծայրից կապել, իսկ լայնությամբ քաշելը դժվար է...

Յես շարունակեցի.

— Ինչո՞ւ ատրճանակի, հրացանի գնդակները յերկար ու նեղ են լինում: Նրա համար, վոր գնդակը հեշտությամբ ողը ճղի ու իր նպատակին հասնի: Յերբ նա ճղում է ողը, ողը ճնշում է գնդակի վրա... բայց ողը շատ չի կարող գնդակի առաջը առնել, խիստ չի կարող ճնշել, վորովհետև գնդակը թեև յերկար է, բայց նեղ է... Հիմա մտնենք ջուրը: Առհասարակ ծովային լողացող կենդանիների մեծ մասը նեղլիկ ձև ունի, մենք տեսնում ենք, վոր նա հեշտությամբ ճղում է ջուրը, նույնպես ջրի հոսանքի դեմ լողում...

Կետը ձուկ չէ, բայց ապրում է ջրում. տես, յեթե նա ինչպես կաթնասուն ցամաքի՝ իր աղգական կաթնասունների նման լայնացած մարմին ունենար, չեր կարո՞նա ջրում ապրել և լողալ: Ուրեմն կետն ել պետք է ձկան պես իլիկի ձև ունենա: Ուրիշ ձև ունենալը ջրի մեջ հարմար չէ: Յեթե կովին նույնիսկ լողաթաթեր տաս և լողալ ել իմանա, նրա մարմնի լայնությունը միշտ ել կը խանգարի արագ և լավ լողալուն...

Ահա ինչո՞ւ թե՛ ձկները, թե՛ բոլոր այլ ջրային մեծ կենդանիներն իլիկի ձև ունին:

Բացատրությանս միջոցին Խրիստիանը շարունակ գլուխը շարժում եր և բերանը բաց, խոշոր աչքերով ինձ եր նայում...

Նա ասաց.

— Ճշմարիտ ես ասում... շարունակիր, հասկացա...  
 Ի՞նչպես յեղավ, վոր այդ կաթնասունը ջրի մեջ ընկավ...

— Խրիստիան, ներիր, վոր պատմությունդ խանգա-

րեցի... բայց այս բողոքիս այն ել ասեմ, հետո դու կը-  
շարունակես...

Դու գիտես, վոր կետի պոչը յերկճյուղանի լողաթաթ  
ե: Հորիզոնական դրությամբ փռվող այդ լողաթաթի մի-  
ջոցով նա կարողանում է ծովի զանազան խորություններ-  
ը մտնել ու դուրս գալ... այդ՝ այսպես ասած, նրա դեկն  
ե, մյուս կողմից ել այդ լողաթաթի գործողությունը, ինչ-  
պես ինքդ ել լավ տեսար, հնարավորություն է տալիս կե-  
տին տեղից տեղ անցնելու, ուրեմն նրա շարժողության  
գործարանն է...

Խրիստիանը մեջ մտավ նորից.

— Այո, այո, յես այդ լավ տեսա աչքովս, բայց յե-  
թե իմանաս, վորքան ուժեղ է այդ լողաթաթը... Ո՛... լավ  
է՝ չիմանաս... աչքովս, կը հավատամ, աչքովս տեսա, ինչ-  
պես մի անգամ իմ հարեան Հովհաննի (լավ մարդ եր, բայց  
խմող եր) նավը խորտակվեց: Կետը կատաղած՝ իր պոչով  
այնպես խփեց նավին, վոր նավը փշուր փշուր յեղավ. մենք  
վրա հասանք ժամանակին, ազատեցինք նավաստիներին մի-  
քանիսին, իսկ Հովհաննը միքանիսի հետ գնացին ջրի տակ:  
Նավն իհարկե գնաց ջրի տակ... բայց յես մի բան ել տե-  
սա... դարձյալ լողաթաթեր. կրծքի վրա, բերանից քիչ  
յետև, յերկու լողաթաթ ել ունի...

— Դրանք թեև արտաքինով լողաթաթեր են, — ասացի  
յես, — բայց յեթե փափուկ մասերը վոչնչացնես, կըտես-  
նես, յուրաքանչյուրը վոսկորներից կազմած. դրանք նրա  
առաջի վերջավորությունները — վոտքերն են, վոր լողաթա-  
թեր են դարձել... Ուրեմն թաթի ներսը շարան-շարան մատ-  
նուկներ ենք տեսնում:

— Ի՞նչպես թե մատներ, — զարմացավ Խրիստիանը:

— Հապա ի՞նչ եյիր կարծում: Նախ պետք է  
ասեմ, ասենք դու ել, հավանական է, գիտես, վոր այդ  
լողաթաթերը հիմա կետի իսկական դեկն է. նրանցով նա  
կարողանում է իր ճանապարհորդությունը այս կամ այն



կողմ, աջ կամ ձախ ուղ-  
ղել... իսկ ապա պետք է  
ասեմ, վոր այդ կաթնա-  
սուճի նախահայրերն իս-  
կական չորքոտանի յեն  
յեղել ցամաքի վրա ապ-  
րող, իսկ վերջը ծովափ-  
նայա կաթնասուճն կենդա-  
նիններ են դարձել... Ինչ-  
պես մեր նախահայրերը  
վայրենի, հում մսով ու  
բույսերով կերակրվող  
մարդիկ են յեղել, նույն-  
պես կհտի նախահայրերը  
ցամաքի կաթնասուճներ  
են յեղել...

— Ըհը... Ասան,  
ասան, հետո՞,— հետաքրքր-  
քրքրվում եր Խրիստիանը.  
— յես գիտեմ, միջանի  
կետանման կենդանիներ



46SP 4U ULM-FZ

ԱԶԴՐԸ Ե՝ ԿՈՆՔԸ

ատամներ ել ունեն... Ասա տեսնեմ, այդ ինչպես քո գիտ-  
նականներն իրենց սենյակներում նստած այդպիսի ճիշտ  
և խելոք խոսքեր կարող են ասել, իսկ յես, վոր շատ տա-  
րիներ կետորսությամբ եմ պարապել, չկարողացա այդ ի-  
մանալ...

— Ո՛ր, Խրիստիան, — ասացի, — մի կարծիր, թե գիտ-  
նականները միշտ սենյակներում փակված են լինում. վո՛չ,  
ներանք շարունակ ճանապարհորդում են, աչքով ամեն ինչ  
տեսնում, ապա խելոք խոսքեր ասում... Դեհ, Խրիստիան,  
հիմա շարունակիր:

— Հա՛վ, կը շարունակեմ... Այո, ինչպես դու ասացիր,  
յես տեսա, ինչպես եյին գործում կետի կրծքի լողաթա-  
թերը, որոնցով նա իր ճանապարհի ուղղությունն եր փո-  
խում... Վո՛րտեղ կանգնեցի... Հա, կարծեմ ասացի, վոր կետը  
15 բոլեն մի անգամ ջրի յերեսն ե դուրս գալիս...

Նավից մենք ուշադրությամբ հետևում եյինք կետին:  
Մենք լավ տեսնում եյինք՝ ինչպես այս կամ այն կետը  
մեկ-մեկ ջրի տակն եր մտնում և նորից ջրի յերես դուրս  
գալիս: Հաղիվ ջրի յերեսին եր հայտնվում, մեկ ել տեսար  
քթածակերից (գլխի ամենավերին մասում) շատրվան խը-  
փեց, փրփրալից ջուրն եր ժայթքում. բերանում լցված  
ջուրը դուրս եր շալրտում...

Յես, վոր ամենայն ուշադրությամբ լսում եյի Խրիս-  
տիանին, ստիպված յեղա նրա խոսքը կտրել մի փոքրիկ  
սխալ պարզելու համար:

— Բայց, Խրիստիան, մի բան սխալ ես հասկացել.  
կետը իր քթածակերից վո՛չ թե ջուր ե ժայթքում, այլ ող,  
թոքերից դուրս ժայթքող խոնավ ող: Կետի մարմնի ներսն  
ավելի տաք ե լինում, քան թե ջրի յերեսին, ովկիանի վրա:  
Մարմնի ներսի ողին խառնվում ենաև ջրի գոլորշին — ողը  
խոնավանում ե: Յե՛վ յերբ թոքերից մեծ ուժով խոնավ  
ողը դուրս ե ժայթքում դրսի՝ ովկիանի յերեսի սառը տա-  
րածության մեջ, խոնավ ողի հետ ժայթքող ջրի գոլորշին

Իսկույն ջուր ե կտրվում ու շատրվանի պես վերև խփում...

Խրիստիանը մի խելացի նկատողություն արավ.

— Այդ ուրեմն ճիշտ այնպես ե կատարվում, ինչպես մեր տներում ձմեռ ժամանակ: Սենյակում ողը տաք ե լինում (կետի մարմնի ներսն ել տաք ե լինում)—և այդ սենյակի տաք ողը (վորի մեջ ջուրը գոլորշիացած ե) հանդիպում, դիպչում ե փողոց նայող սառը ապակիներին և ապակու վրա ջուր ե նստում... այդ ուրեմն տաք ողի մեջ յեղած գոլորշին ե... հասկացա... ես ինչ լավ բաներ են ասում...

— Խրիստիան, մի բան ել ասեմ, հետո շարունակիր. իմացիր. պատահում ե, վոր կետի քթածակերը դեռ ջրի յերես չհասած յերբ կեսը արտաշնչում ե ողը (ուրեմն քիչ ջրի տակից), ջրի տակ քթածակերից դուրս ժայթքող ողը միքիչ ել ովկիանի ջրերից ե վեր բարձրացնում...

— Ա... ան... տես հալա, — զարմացած գլուխը շարժելով արտասանեց Խրիստիանը. — ան գիտի հան, այնքան ժամանակ նրանց վորսին կպած ու այդ ել չեմ իմացել...

— Լավ, հիմա այդ թողնենք, ասացի ես Խրիստիանին, շարունակիր պատմությունդ:

Խրիստիանը մաքրեց իր չիբուխը, նոր, թարմ ծխախոտ միքանի անգամ ներս բաշեց ծխախոտի ծուխը և ապա բերանը բաց, ծուխը կետի շատրվանի պես բաց թողեց յերկու քթածակերից ու շարունակեց պատմությունը.

— Ոգնականներին վրա յես այնքան ել վստահ չեյի: Յես ավելի փորձված ձկնորս եյի: Թեև նավին վրա կետ վորսալու համար, հատուկ թնդանոթ ունեյի, բայց յես սկզբում վճռեցի դիմել իմ սովորական միջոցին: Յես վարժվել եյի մակույկից հարպուն (նիզակ՝ ծայրը կարթած) նետել կետի վրա. շատ հաճախ հարվածս հասնում եր նպատակին:

Իսկույն հրամայեցի մակույկ իջեցնել. վերցրինք՝ ինչ

վոր հարկավոր էր: Ձեռքուժս պահել էյի մի լավ հարպուն — մի լավ սրածայր յերկաթե ձող՝ նա ամուր թուկով ամրացրած էր մակույկին:

Նավաստիներն սկսեցին զգուշությամբ թիավարել:

Ծովը մեղմ էր: Ալիքները չէին տատանում մեր մակույկը: Յերկինքը թեև ամպած էր, բայց խաղաղ ամպեր էին: Ծովային թռչունները մեկեն ի մեկ անցնում էին մեր վրայով. կարծես նրանք ել նախազգուժ էին յուղալի պաշարը:

Մենք բավականին մոտեցել էինք. այն է՝ պատրաստում էյի ձեռքիս բռնած հարպունը նետելու, թարսի պես կետը մտավ ջրի տակ: Այդպիսի դեպքեր շատ են պատահում. պետք է համբերել: Յես չհուսահատվեցի: Բախտի բերմամբ մեզնից վոչ այնքան հեռու համենայն դեպս հարպունի հարվածին համապատասխան տարածության վրա ջրի յերեսից շատրվան խփեց: Կետին ել նկատեցի: Ուրիշն էր:

Հարպունս պատրաստեցի, անցա մակույկի ծայրը: Կետը հանդարտ որորվում էր ջրի յերեսին, իսկ մեր նավակը մոտենում ու մոտենում էր:

Հասավ հարմար ըռպեն. հարպունս ուժգին ձգեցի ուղիղ կետի գլխի կողմը: Հարվածս չվրիպեց:

Բայց թե ինչ պատահեց այդ ըռպելին, մինչև հիմա ել չեմ մոռանում:

Յերբ հարպունս նետվեց, գնաց ուղիղ կետի գլխի խողմը խրվեց... Բավականին խոր էր մտել սրածայր գործիքս: Հարպունին կապած թուկը ձգվեց. հանկարծ մեր նավակը տարուբերվեց, մեր շուրջը ալիքներ գոյացան և... ինչ յեղավ... շփոթվեցինք... ճիշտ է, կետը հարվածից վիրավորվել էր, բայց վոչ մահացու... հարպունը կիսակենդան կետի գլխին մնաց:

Վիրավորված, խիստ զայրացած կետը սկսեց փախչել... ավելի ճիշտ ասած, սկսեց այս ու այն կողմ ընկ-

նել... իսկ մեր նավակը... Ո՛ր, փոքրիկ տաշեղի նման տա-  
րուբերվում եր ալիքներին:

Դե, մարդ ես, մի շփոթվիր:

Կետն արագությամբ առաջ եր վազում, իսկ մենք  
գլուխներս կորցրած՝ նրա յետևից քաշ եյինք գալիս: Քանի-  
քանի անգամ քիչ եր մնում՝ մեր նավակը խորտակվեր...  
բայց աստված մեզ հետ եր:

Մի խոսքով ի՞նչ յերկարացնեմ, ել կետի մասին ռ՜վ  
եր մտածողը. հարկավոր եր հարպունը զոհել, կյանքն  
ավելի թանգ եր մեզ համար:

Բոլորս վրա հասանք կացիններով: Խփիր, հա խփիր...  
թոկն ել թարսի պես այնպես եր ամրացել, վոր ասել չի լինի:

Քրտնաթոր եյինք յեղել: Սիրտս արագ խփում եր.  
մի բանից եյի վախենում... ի՞նչ կըպատահի մեզ, յեթե  
կետը հանկարծ...

Մտածելն ու իրագործվելը մեկ յեղավ: Նավակը սկսեց  
թեքվել. կետն այլևս չեր յերևում. մտել եր ջրի տակ...

— Շուտով... շուտով, կտրեցե՛ք, — գոռում եյի յես...

Բայց ո՛ւր... մեկ ել տեսնեմ՝ կարծես մեկը նավակին  
խփեց... ամեն ինչ տակն ու վրա յեղավ: Մի բոպե կար-  
ծես ինձ կորցրի: Յերբ զգաստացա, զգացի ովկիանի սառը  
ջրերը... Ջրի մեջ եյինք. բոլորս ել լավ լողալ գիտեյինք:

Շուտով մեր նավը հասավ մեզ ոգնոթյան: Թոկի  
աստիճաններով վեր բարձրացանք: Իսկույն վազեցի սեն-  
յակա թրջված շորերս փոխելու:

Նորից դուրս վազեցի և իսկույն հրամայեցի նոր  
հարպուն պատրաստել, ապա ամենայն խստությամբ հետա-  
պնդել վիրավոր կետին:

Չգիտեմք՝ նավը վո՛ր կողմն ուղղեց: Թեև կետը սովո-  
րաբար 15 բոպեն մի անգամ դուրս ե լողում նոր ող-  
ջնչելու, բայց այս անգամ շատ ավելի յերկար ժամանակ  
սպասեցի:

Յես ի հարկե փորձված եյի, գիտեյի պատճառը: Վի-

րավորված կետը, լուրջ վիրավորված կետն է միայն յերկար ջրի տակ մնում, հաճախ մի ժամ շարունակ:

Յես չհուսահատվեցի: Մեր նավակն ել կորավ: Թե վոր կետին բռնեցինք, մեր նավակն ել յետ կըստանանք:

Կես ժամ եր անցել: Ուշադրությամբ դիտում եյի չորս կողմի ջրերը:

—Տեսա, տեսա,—ձայնեց նավաստիներից մեկը մատով մի կողմ ցույց տալով:

Նայեցինք այն կողմ... իսկապես ջրի յերեսին մի սև բան եր յերևում: Հանկարծ ջրի մակերևույթից վեր սլացավ մեզ լավ ծանոթ շատրվանը, բայց վո՛րջան թույլ եր այն. շատ բարձր չեր նետվում:

Այո, կետը վիրավորված եր և այն ել լուրջ վիրավորված:

Նավը արագացրեց ընթացքը:

Մոտենում եյինք:

Այս անգամ հրամայեցի հարպունը թնդանոթով նետել: Այս անգամ հրապունը սովորական, հասարակ հրապուն չեր, ավելի մահաբեր եր. ծայրին պայթուցիկ նյութ ե տեղավորվում: Յերբ այդ հարպունը խրվում է կետի մարմինը, նյութը պայթում է, իսկ կետը, պարզ է, տեղն ու տեղը մահանում է:

Իհարկե այդ այն դեպքում, յերբ հարվածը գլխի կողմն ուղղված լինի կամ հարպունը խորը ներս մտած:

Մոտեցանք:

Թնդանոթաձիգը պատրաստվեց ու մեկ, յերկու... հարպունը դուրս սլացավ կետի ուղղությամբ: Հարվածը դարձյալ աջող եր: Հարպունը կապած եր մեր նավից. թոկը ձգվեց: Նավը փոքր ինչ առաջ գնաց: Կետը նորից ջրի տակ գնաց... Թոկը այլևս չեր ձգվում...

Մի բան մենք տեսանք ջրի յերեսին և բոլորովին հավաստիացանք, վոր կետը շատ լուրջ եր վիրավորվել, յեթե վոչ մահացել:

Ձուրը վորոշ տեղ արյունոտվել էր:

Կետը նորից յերևաց մեզանից շատ մոտ: Շատրվանը չ'ըշտաց: Սպանված էր կետը: Յերկու հարպունն էլ ցցված էյին նրա մարմնին, կետից մի փոքր հեռու լողում էր մեր մակույկը՝ շուռ յեկած:

Ահագին կետ էր, մինչև 30 արշին կըլիներ: Մոտավորապես 7000 փութ կըգար, գուցե և ավելի:

Կետի մարմինը մղեցինք դեպի մոտակա ափը:

Դե, դու գիտես, վորքան ոգուտ տեսա նրանից: Կետի մեջքից սկսեցինք յերկու կողմից քառակուսիներով ճարպ կտրատել: Յեվ ինչ ես կարծում, ի՞նչպես էյինք կտրում... Դանակով միայն... Ո՛հ, վո՛չ, դանակը նույնիսկ մեծ դանակը անոգուտ գործիք է առանց մուրճի: Կարծում ես հեշտ է կետի այնքան կարծր և հաստ ճարպը կտրելը: Յես չափեցի և, յերևակայիր, ճարպի հաստությունը կես արշինի յեր հասնում:

Ճարպի վրա հատուկ դանակներ էյինք դնում, ապա մուրճով հարվածում... Ուղղակի չեմ հասկանում՝ կետին այդքան ճարպ ինչի՞ն է պետք... Ջարմանալի յե...

— Ջարմանալի վոչինչ չկա, — ասացի յես:

Խրիստիանը փոքր ինչ ժպտալով նայեց ինձ ու հարցրեց.

— Ով գիտե՞ խելոք գլուխներն այդ զարմանալի բանն էլ հասկացել են...

— Ի հարկե, — ասացի յես, — առաջ դու վերջացրո՛ւ, թե ի՞նչ արիր կետին, հետո յես կըպատմեմ այդ մասին:

— Դե, շատ լավ, շարունակեմ, — սկսեց նորից Խրիստիանը, — ճարպը քառակուսիներով կտրում էյինք ու դարսում մի կողմ: Հույս ունեյի՝ կետի բեղերից ել մեծ ոգուտ տեսնեմ: Ի՞նչ ես կարծում. կետը ատամներ ունի: Յես գոնե չտեսա, բայց նրա բերանում մի ուրիշ բան տեսա: Վերևի ծնոտից իջնում են մոտավորապես 100 մինչև 150 յեղջերային թիթեղներ: Թիթեղները յեռան.

Ովկիանի քաղավորը 2

կյունածեղ են և ներքին մասում փետրածեղ թերթերի յեն բաժանվում, դրանք են ահա կետի բեղերը... թիթեղների արանքներում բռնված մանր-մունր ձկնեղեն և փափկամորթներ գտա... Այդքան մեծ կենդանի և այնպիսի փոքր կենդանիներ ե ուտում:

Հավ, յես արդեն ասացի, վոր կետս մոտավորապես 7000 փութ կըբաշեր... բայց յերբ ուրիշի մոտ եյի ծառայում, մի անգամ մի կետ սպանեցի, վորը, բոլոր մասնակցողները համոզված եյին, վոր 9000 փութ կըբաշեր:

Ինչ վոր ե, սռաջիս կետ եր, վորից բավականին փող պիտի վաստակեյի... Ձեր փողով միքանի հազար ուլբլի փող պիտի վաստակեյի և ի հարկե վերջը վաստակեցի...

Խրիստիանը մի բոպե լռեց, ապա հարցրեց.

— Կետ տեսե՞լ

ես, — բայց հիշելով, վոր մի անգամ արդեն հայտնել եյի,



ԱՏԱՄԸ

Թե չեմ տեսել, — շարունակեց. — Հս, ասացիր չեմ տեսել... Գիտե՞ս ինչպիսի աչքեր ունի. ահա իմ բռունցքը տեսնում ես, այս բռունցքի չափ. և այդ աչքերը մի փոքր յետ են գտնվում այն տեղից, վորտեղ վերին և ստորին ծնոտներն են միանում:

Քթածակերը վերեն են, գլխի դագաթին... Ահա այդ քթածակերից եր շուռում շատրվանը: Թեև յես չեմ տեսել, բայց ասում են (տեսնող յեղել ե), վոր շատրվանը շատ անգամ մինչև 10 արշին բարձրության ե հասնում:

Ինչ յերկարացնեմ... Մարմինը բոլորովին անմազ ե. այդ ինչպես ե, վոր կաթնասուն կենդանին անմազ ե. ինձ համար հասկանալի չե... Յես գիտեմ, վոր մազերն առհասարակ կենդանու մարմինը տաքացնում են, բայց զարմանալի չե, կետը անմազ ե, ինչպես ե այդ մեծ մարմինը տաք մնում. . Մի կողմից՝ մազ չկա, իսկ մյուս կող-

մից, ինչպես ասացի, կես արշին հաստությամբ ճարպ... Այդքան ել ճարպ... ինչո՞ւ համար... անհայտ ե...

Խրիստիանը թեև կես տեսել էր, շատ էր տեսել, լավ ծանոթ էր նրա մարմնի կազմությանը, բայց և այնպես բնության գաղտնիքները նրան այնքան ել հասկանալի չէին։

— Լսի՛ր, Խրիստիան — ասացի, — ահա հիմա յես քեզ կը պատմեմ, թե ինչո՞ւ կեսն անմազ ե և այնքան ճարպոտ... Հույս ունի՛մ՝ խելոք մարդկանցից լսած իմ բացատրությունը քեզ դուր կը գա։

Դու ել լավ գիտես, վոր կեսը կաթնասուն ե, նա իր ձագերին կաթով ե կերակրում...

— Ինչպես չե, — մեջ մտավ Խրիստիանը, — այդ ե՞լ չիմանում, քանի վոր յես իմ աչքովս համոզվեցի, յերբ նրա փորի հատուկ խորշերի մեջ պահված տեսա նրա ծըծերը։ Վերջապես մի անգամ տեսա մի մեծ կետ։ Իսկ նրա կողմին մի ավելի փոքր կետ։ ձագը կըլի՛նի, մտածեցի... թե ինչպես ե ծծում մոր կաթը — այդ յես չեմ տեսել, բայց մեր քաղաքում իմացողներ կան։ Ասում են յերբ կեսը ծնվում ե, նա այնքան հասունացած ե լինում, վոր կարողանում ե շարունակ իր մորը հետևել։ Յերբ կաթ ե ցանկանում, գլուխը մոտեցնում ե ծծերի խորշին, շրթո՛ւնքներով ծծերը բռնում ու կերակրվում... բայց ելի մի բան անհասկանալի յե, ի՞նչպես ե կարողանում կետիկըն իր խոշոր շրթո՛ւնքները շարժել ծծելիս...

Յես ասացի.

— Ճիշտ ե, նրանց շրթո՛ւնքներն այնքան ել ազատ ու հեշտ չեն շարժվում. դրա համար, յերբ մայրը զգում ե, վոր զավակը բռնել ե իր ծծերից, նա իսկույն այնպես սեղմում ու ձգում ե իր ծծերը, վոր իսկույն կաթը սրըսկվում ե, դուրս ե նետվում և ընկնում ի հարկե ձագի բերանը...

— Զարմանալի յե, — ասաց Խրիստիանը, — ախր այդ

ի՞նչպես իմացան... Հավատում եմ... ի՞նչպես չհավատամ...

— Հիմա, Խրիստիան, շարունակեմ մազերի և ճարպի մասին: Բոլոր կաթնասուններին անհրաժեշտ է մարմինը և ներքին գործարանները տաքության մեջ պահպանել: Ցամաքի կաթնասունների մարմնի տաքությունը պահպանում են մազերը, մորթին, մե՛ք ել ենք կաթնասուններ և մեր մարմնի տաքությունը պահպանում ենք շորերով, իսկ կե՞տը... Նա անմազ է, այդ բավական չէ դեռ, կետը Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների հյուսիսային սառը ջրերում է ապրում... Ըր՞, Խրիստիան, ի՞նչ կասես...

Խրիստիանը պատասխանի փոխարեն ծոծրակը քորեց: Յես շարունակեցի.

— Հիմա լսիր. ճարպոտ մարդն այնքան էլ ցրտից չի վախենում. ճարպը պահպանում է տաքությունը և չի թողնում, վոր իր միջով ցուրտ անցկենա: Կետի մարմինն էլ մեծ քանակությամբ ճարպով է պատած. օվկիանոսի սառնությունը չի անցնում ճարպի միջով. ճարպը միաժամանակ չի թողնում, վոր կետի տաքությունը դուրս գա— ի՞նչ արած, այդպես է ճարպի հատկությունը... Հետո մի բան էլ. ի՞նչ ես կարծում, յեթե ճարպի մի զուռն ձգես ջրով լի բաժակը, ի՞նչ կըլինի...

Խրիստիանն իսկույն պատասխանեց.

— Կըլինի այն, ինչ վոր բոլորիս էլ հայտնի է. ճարպը թեթևության պատճառով ջրի յերեսին կըմնա... Հետո՞...

— Շատ գեղեցիկ, — ասացի. — Նախ և առաջ պիտի ասեմ, վոր ճարպի գունդը չի խորասուզվում վոչ թե իր թեթևության պատճառով, այլ նրա համար, վոր նա ջուր չի ծծում... յեթե ճարպի գունդն իսկապես ջուր ծծեր, նա ավելի ևս կըծանրանար և կըխսրասուզվեր... Պիտի ասեմ, վոր ջրային թռչունների պոչի կողմը ճարպանման հեղուկ է դուրս գալիս — այդ հեղուկը թռչունը քսում է փետուրներին և թռչունի վրա շատ ջուր չի նստում, ջուր-

ըը չի ծծվում... Հիմա հիշիր կետին, ինքդ ել լավ գիտես, վորքան մեծ ե նրա մարմինը... ինչպես այդքան մեծ կենդանին այնպիսի հեշտությամբ մնում ե ջրի յերեսին և ծանրությունից չի խորասուզվում: Ճարպն ե, վոր նրան թեթևացնում ե, չի թողնում, վոր կետը ծանրանա և ջրի տակ գնա: Յեթե ճարպը բոլորովին չլիներ կամ ավելի քիչ լիներ—կետը դժվարությամբ կապրեր ովկիանի ջրերում և մանավանդ հյուսիսային սառը ջրերում. հազիվ կը կարողանար սառցակույտերի, սառցային սարերի արանքներում լողալ... ճարպը նրան տաք ե պահում... Դեհ, Խրիստիան, հիմա ինչ կասես:

Խրիստիանը լսում եր ուշադրությամբ, վերջին հարցիս նորից ծոծրակը քորեց ու ասաց.

— Այ գիտի հա, եդ վո՞ր գլուխն ե կարողացել այդ պիսի բաները հասկանալ: Շատ իրավացի յե այդ բացատրությունը. և ինչպես յես չեմ մտածել այդ մասին:

Յես մի բան հիշեցի.

— Խրիստիան, մենք շատ հեռու գնացինք. դու պատմեցիր կետի մասին, բայց չասացիր՝ ինչ կապ կա քո յերեսի վերքերի և կետորսության մեջ:

— Այս բոպեյիս, այս բոպեյիս,—նորից աշխուժացավ նա, բայց նկատեցի՝ ինչպես նրա աչքերով տխուր փայլ անցավ:—Ո՛ր,—ասաց նա—գլխավորն ու ցավալին ել հենց այդ ե: Յեթե այդ չլիներ, յես հիմա այստեղ ձեզ հետ նստած չեյի զրուցիլ: Ո՞վ գիտե ովկիանի վո՞ր մասում կետի յետևից ընկած լինեյի: Լսեցեք. յես ասացի, վոր մեր սպանած մեծ կետին մենք լավ մաքրադարդեցինք—ինչ հարկավոր եր՝ նավը տեղափոխեցինք: Մի բան ել ասեմ: Յերբ կետի փորը կտրեցի, այնտեղ ստամոքսի մեջ բավականին մանր, շատ մանր ձկներ գտա, կային և փափկամորթ կենդանիներ... ինչպես յերևում ե, կետը խոշոր բաներ ուտել անկարող ե, նրա վորկորը (յես ինքս տեսա) շատ փոքր ե և ատամներ ել չունի, վոր խոշոր

ձուկը մաս-մաս անելով ստամոքսը ձգի... Առաջ յես չե-  
յի հասկանում, թե ինչպես ե կշտանում կետը մանր-մու-  
նըր կենդանիներ ուտելով. հետո յես իմացա, վոր կետը  
սոված չմնալու համար մի անգամից մեծ քանակությամբ  
պաշար պիտի կուլ տա: Յեվ նա յուրաքանչուր ձկնիկը ա-  
ռանձին չի բռնում—ինչպես բռնի փոքրիկ կենդանուն,  
քանի վոր ատամ չունի—շատ դժվար ե: Դրա համար ել  
կետը մի անգամից շատ ջուր ե լցնում բերանը, վորի հետ  
ի հարկե մանր կենդանիներ են ընկնում, բերանը քիչ ծած-  
կում ե: Յեռանկյունաձև թիթեղները հասնում են ներքին  
ծնոտին: Կետը նորից ջուրը դուրս ե թողնում թիթեղների  
արանքներով, իսկ կենդանիները մնում են բերանում: Յես



ՄՆՈՒՆԴԸ

ինքս թիթեղների, բեղերի արանքներին բավականին ձրկ-  
նեղ են, փափկամորթեր գտա: Ապա ձկնեղենը կուլ ե տա-  
լիս...

Բռնած կետին մաս-մաս արի, արժեքավոր կտորները  
նալս տարա ու հայրենիք վերադարձա: Մեծ գումար  
վաստակեցի: Յերկու զրպաներս ել փրվեցին: Մոտս այն-  
քան փող կար, վոր բավական եր իմ ծրագրներն իրագոր-  
ծելու՝ տուն առնելու, մի հողի կտոր ել հետը. ապա հան-  
գիստ ապրելի սեփական աշխատանքով ձեռք բերած տը-  
նակումս:

Բայց վճռեղ... Աշխարհիս ամենամեծ սատանան (անիծվի նա) մտել եր գլուխս և դուրս եր գալիս, վոր ասես — միտք ել չուներ. շարունակ ուղեղս ծեծում եր՝ «այ Խրիստիան, յերկու դրամ ունես, չորսը դարձրու»:

Չեմ ուզում — ասում եմ: Սատանան ելի. «այ Խրիստիան, յերկուսը չորս դարձրու, յերկուսը չորս դարձրու, քաղաքում մի լավ տուն առ»: Տեր Իմ... անպիտանի խոսքին կալա: Գլուխս տարավ:

Յերկու շաբաթ չանցած՝, յես ելի ովկիանումն եյի. ելի կետի յետևից եյի ընկել. ցանկանում եյի գումարս յերկուսի տեղ չորսը դարձնել:

Յես այս անգամ վատահ եյի, վոր մի մեծ կետ պիտի բռնեմ: Հազիվ հորիզոնի վրա սև գիծ ու սպիտակ շատրվան յերևաց, նալն այն կողմ ուղղեցինք: Մոտենում եյինք կեսին: Կետը մեծ եր, շատ մեծ: Չգիտեմ՝ մեզից վախեցավ, թե սրամաղրությունն եր վատ, կետը սկսեց պոկ գալ մեզնից, շուտով ջրի տակ մտավ, 25 բուլեյից հետո դուրս յեկավ շատ և շատ հեռու...

Այդ մեկը չեղավ: Հույսս կտրեցի նրանից:

Ուրիշ կետի եյի սպասում:

Յերեաց յերկրորդ կետը: Հիմա սրան սկսեցի հետապնդել. հրամայեցի հարպունը պատրաստել: Հարկավոր եր շտապել, թե չե՝ սրանից ել կըզրկվելի: Սա ել խոշոր տեսակից եր: Հարպունը նետվեց. նետվեց անհաջող... Կետը ջրի յերեսին եր:

Դարձյալ հետապնդեցինք, նորից հարպունը ողը ձգելով սլացավ դեպի կետը և... չվրիպեց: Կետը մի բուլե անշարժացավ, ապա շարժվեց, մարմինը ամբողջովին ըսկսեց տատանվել, չորս կողմը ալիքներ գոյացան:

Հանկարծ կետը վիրավոր գլուխը մեր կողմը դարձրեց... (այնպես մահացու չեյինք վիրավորել) և ինչպես սլացավ դեպի մեր կողմը. բոլորս ել զգացինք սոսկալի վտանգը. նավը յես նահանջեց. բայց կետի ընթացքն ա.

վելի արագ եր, մոտեցավ մեր կողմը, ջուրը սաստիկ ավելոծվում եր:

Հանկարծ նավս մի խիստ ուժեղ հարված զգաց, այնքան ուժեղ, վոր տախտակամածը ճռուաց, յես դիտողական սենյակումն եյի: Նորից ավելի խիստ հարվածի յենթարկվեց նավս, չորս կողմ տակն ու վրա յեղավ, ճռուց, ճոթճոթոց, գոռում, գոչյուն: Յես դնդակի պես վեր նետվեցի և ընկա բաց սրահից (հիմա այստեղ եյի) ներքև: Կարծեմ հետո ծխնելույզը մեծ աղմուկով ցած գլորվեց... Չորս կողմը փոշի... ծուխ... և ինձ մի տարորինակ մառախուղ սկսեց պատել... Պառկած եյի անշարժ, յերեսիս զգում եյի ինչ վոր տաք, շարունակ հոսող հեղուկ, անդամներս շարժեղ անկարող եյի... Հետո, կարծես, ականջիս շշուկ անգամ չեր հասնում... վորտեղ եյի... անապատում — հետո թմրեցի... թմրեցի... Յեվ չգիտեմ ինչ դրության մեջ ընկա: Միայն յեթե չեմ սխալվում, զգացի, վոր ինձ մի բան դիպավ, այնուհետև ել վոշինչ հայտնի չե...

Յերբ զարթեցի, նայեցի չորս կողմս. անսովոր շրջապատ՝ սպիտակ պատեր, սպիտակ աթոռներ, սպիտակ սեղաններ... լավ լսեցի՝ մեկն ասաց.

— Ուշքի յեկավ արդեն... վտանգն անցավ: Նայեցի խոսողի կողմը: Մարդ եր՝ սպիտակ զգեստով: Հասկացա. բժիշկ եր: Յերբ աչքիս մի շարք սպիտակ մահճակալներ յերևացին, միտքս ավելի պարզվեց. հիվանդանոցումն եյի...

— Ծարավ եմ, — ասացի. ջուր բերին իսկույն. խմեցի. զովացրեց. կարծես ուժերս ավելացան...

— Դեհ, Խրիստան, — հարցրեց բժիշկը — ինչպես եք:

— Լավ եմ — ասացի, — բայց, պարոն բժիշկ, ինչո՞ւ յես հիվանդանոցումն եմ... ինչո՞ւ...

— Հետո կիմանաք. այժմ հանգստացեք:

Ինձ ինչ վոր դեղ խմացրին, ապա հեռացան: Այժմ

արդեն կարող եյի ազատ մտածել, թե ինչ է յեկել իմ գլխին...

Հասկացա, վոր իմ հիվանդության պատճառը վերջին կետորսությունն էր: Հիշեցի կետի կատաղի հարվածը: Յես վերևից ներքև գլորվեցի, շատ եր արյուն հոսել ըստացած վերքերիցս, դրա համար ել թուլացել եյի և ուշքից գնացել...

Այժմ հիվանդանոցում յերեսս յերեք կողմ փաթաթած եր շորերով: Մեկենիմեկ ցավ եյի զգում...

Ինչ յերկարացնեմ. մյուս որը ոգնականս, վոր նույնպես կենդանի յեր մնացել և անմնաս, պատմեց ինձ, թե ինչպես յես ազատվեցի: Յերբ կետը յերկրորդ անգամ իր ագիով հարվածեց, նավը ճռուաց, ճեղքվեց, սկսեց խորտակվել... մյուս կողմից ել հրդեհ սկսվեց: Նավաստիներից միքանիսը խեղդվեցին, մեքենավարն այրվեց... ոգնականս միքանի բանվորներով ինձ եր վորոնում. շուտով գտան ինձ ուշաթափ, իսկույն մակույկը տարան... մի կերպ մակույկը ազատվեց կետի զայրույթից. ինձ ծանոթ կետորսներից մեկը մեզ՝ մեր անվտանգելի մակույկից իր նավի վրա առավ և ապա մեր քաղաքը հասցրեց...

Ահա ամբողջ պատմությունը:

Յես կորցրի վաստակած գումարիս մեծ մասը. նավս բոլորովին խորտակվել էր: Իսկ յես այնպիսի վերքեր եյի ստացել, վոր շարունակել նորից կետորսությունը — բոլորովին անհնարին էր...

Յերկար պատմությունն է, թե ինչպես ընկա այս շոգենավը, վորտեղ յես ու դուք զրուցում ենք. շատ տարի յե անցել .. Չեյի ցանկանում ծովին բոլորովին հրաժեշտ տալ, ծովը — իմ կյանքս է, առանց նրա թարմ ոդը շնչելու յես անկարող եմ ապրել... Այժմ, ինչպես տեսնում եք. նավաստի յեմ... Կորավ և առնելիք տնակս և հողս... Միայն մնացին դեմքիս վերքերի սպիները...

Ահա թե ինչ կապ ունենա այդ հետքերը կենտրոն-  
թյանս հետ...»:


Անցյալի տպավորության տակ Խրիստիան մոռացել  
էր չիբուխից միջանի անգամ ծխելու. նորից ծխախոտ  
լցրեց, նորից վառեց և ապա մեծ ախորժակով ծուխը  
ներս քաշելով՝ դուրս թողեց քթածակերից...

— Այժմ դեպի գործ — ասաց Խրիստիանը. հերթս — մո-  
տենում եմ:

Ժպտաց, բայց աչքերի մեջ փայլող արցունքներ նը-  
կատեցի... Գնաց նավաստիների բաժինը...

Շոգենավը մեղմ առաջ էր ընթանում... Նայեցի հե-  
ռուն... Չորս կողմ ջուր... ջուր և ջուր...





A II  
35157





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035157

